

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խ. Արուսյանի անվ. ՀՊՄՀ Լեզվաբանական հետազոտությունների
գիտական լաբորատորիա
linguala151@mail.ru

ԼԻԼԻԹ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու,
Համազգային Արևմտյան շրջանի գրական միավոր,
Լոս Անջելես, ԱՄՆ
lilitellen@yahoo.com

ԱԾԱԿԱՆԻ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Բանալի բառեր¹ ածական անուն, թվի կարգ, մասնիկավորում, շարահյուսական մակարդակ, ձևաբանական իմաստավորում, սերող հիմք, թվակազմական մասնիկներ:

Ներածություն

Թվի քերականական կարգն արտահայտում է քանակայնության գաղափար, որ տարածվում է հաշվելի առարկաների վրա: Հաշվելի առարկաները կարող են լինել մեկից ավելի. այստեղից էլ քանակայնության հասկացությունը:

Հին հայերենում (և բազմաթիվ այլ լեզուներում) անվան եզակի թիվը նշույթավորված չէ. իբրև քերականական իմաստի արտահայտման միջոց՝ հանդես է գալիս բառի ուղիղ ձևը, որ հատկանշվում է զրո ձևույթով: Ի հակադրություն զրո ձևույթի, հոգնակի թիվը նշույթավորված է. հոգնակիության գաղափարն արտահայտվում է թվանիշ թեքությունների միջոցով, որոնք բառը վերածում են բառաձևի:

Թվի գաղափարը տարածելի է ոչ միայն գոյականների, այլև հատկանշային խոսքի մասերի վրա, թեև վերջիններս այս ոլորտում այլ յուրահատ-

* Հոդվածը ներկայացվել է 16.11.20, գրախոսվել է 13.11.20, ընդունվել է տպագրության 02.08.21:

Ածականի թվի քերականական կարգի արտահայտությունը հին հայերենում

կություն են դրսևորում, որ պայմանավորված է նրանց փոխանվանաբար գործածությամբ և հոգնակի լրացյալներին համաձայնելու շարահյուսական հատկանիշով:

Թվի կարգն արտահայտելու տեսակետից որոշակի յուրահատկություն են դրսևորում ածականները, որոնք հին հայերենում թվի գաղափարն արտահայտում են կա՛մ փոխանվանական գործածությամբ, կա՛մ հոգնակի լրացյալին համաձայնելու հանգամանքով՝ հանդես գալով շարահյուսական մակարդակում:

Ածականի համակարգում հոգնակի թվի իմաստը ոչ թե ձևաբանական, այլ շարահյուսական հատկանիշ է, քանի որ ածականն առանձին հոգնակի թվով հանդես չի գալիս, եթե չի գործածվում գոյական անվան հետ. հետևաբար հոգնակի թվի հատկանիշը պայմանավորված է նախադասության անդամների համաձայնության հանգամանքով, որ շարահյուսական հասկացություն է: Մյուս կողմից՝ ածականի թվի գաղափարը պայմանավորված է փոխանվանական գործածության հանգամանքով, երբ ածական անունը գործածվում է գոյական անվան փոխարեն, որի հետևանքով տեղի են ունենում ածական-գոյական խոսքիմասային մասնակի փոխանցումներ՝ խոսքիմասային տարաբժեք բառերի անջատումով: Եթե ածականը հանդես է գալիս նաև հոգնակի թվով, ապա կարելի է խոսել նրա թվակազմական հատկանիշի մասին. այսինքն՝ ի՛նչ եղանակով կամ ի՛նչ միջոցով է արտահայտվում նրա հոգնակիակազմությունը:

Գ. Զահուկյանը, կատարելով առաջնային արմատական ածականների իմաստային վերլուծություն, նկատում է, որ դրանք ըստ որոշչային կարգերի բնութագրում են նյութական և տարածական օբյեկտներ կա՛մ ինքնին, կա՛մ հիմնական կարգերին բնորոշ հարաբերությամբ հանդերձ: Վերլուծելով երկիմույթ արմատական ածականներին բնորոշ որակական և *քանակական*, ինչպես նաև չափի ու տեղի կարգերի զուգորդմամբ բնութագրվող տիպերը՝ նա առանձնացնում է որոշակի խմբեր, որոնք բնորոշվում են *կազմի և թվի*, *կախման և թվի*, *ձևի և թվի* կարգային հատկանիշներով¹: Այլ կերպ ասած՝ գիտնականը թվի քերականական կարգը տարածելի է համարում նաև հատկանշային խոսքի մասերի վրա:

¹ Զահուկյան 1989, 84, 89–90:

Ածական անվան գործածությունը լրացական դերով

Ածական անունն ընդհանրապես առանց գոյականի խոսքում գործածություն չունի, ըստ այդմ՝ ածականի հոգնակի թիվը պայմանավորված է ածական-գոյական համաձայնության հանգամանքով. միավանկ ածականները նախադաս և հետադաս դիրքում, իսկ բազմավանկ ածականները հետադաս դիրքում թվով (և հոլովով) համաձայնում են հոգնակի լրացյալներին: Ածականի թվի կարգը հնարավոր չէ քննել առանց հաշվի առնելու նրա գործառնությունը (շարահյուսական միջավայրը): Այսպես՝

Ոչ է օրէն դիցազանց ... թշնամութիւն յաւիտենական ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել (Խոր., 178): Մեծաց հարուածոց արժանի առնէր զՎարազն (Բուզ., 87): Եւ ոչ է արարիչ չարաց իրաց, այլ բարեաց (Եզն., 8):

Ազգաց քաջաց, մեծաց հարուածոց և չարաց իրաց կապակցություններում քաջաց, մեծաց և չարաց ածականները համաձայնել են հոգնակի լրացյալներին (ազգաց, հարուածոց, իրաց) և արտահայտում են հոգնակի թվի իմաստ՝ ք-ց հերթագայության միջոցով:

Դիտարկենք բազմավանկ ածականների հոգնակիակազմությունը և նրանց գործածությունը լրացական դերով.

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին յանապազ բոկ եւ հետի երթալին ի տունս աղօթից (Եղ., 201): Ոչ են յուացեալ ի նիզակս իւրեանց, այլ ի վերայ լերանց բարձանց իւրեանց (Յուդիթ, Է, 12): Գիսաւոր նոխագիւք և ցլուք սպիտակօք առատացոյց զզիոս կրակի (Եղ., 12): Արտաքնոցն երեւէին իբրեւ այրիք սգաւորք (Եղ., 203): Յիշի աստանօր ի պատմութեանս՝... բնակեալ յառաջագոյն արք սակաւք ինքնական հնազանդեալ դիցազինն (Խոր., 33): Դարձի՛ր նմանեաց դու այծեման կամ որթոց եղանց ի վերայ լերանց խնկաբերաց (Երզ., Գ, 17):

Դիտարկված օրինակներում հետևյալ բազմավանկ ածականներն արտահայտում են հոգնակի թվի իմաստ՝ փափկասունք, բարձունք, սպիտակօք, սգաւորք, սակաւք, խնկաբերաց, որ պայմանավորված է գերադաս անդամի՝ գոյականի հոգնակի թվով՝ տիկնայք, լերանց, ցլուք, այրիք, արք, լերանց:

Վերոբերյալ ածականների հոգնակի թվի իմաստն արտահայտվել է մասնիկավորման եղանակով: Այսպես, փափկասունք, սգաւորք և սակաւք բառերը հոգնակի թիվն արտահայտում են –ք մասնիկի միջոցով, բարձունք ածականի արտահայտության պլանում ձևականորեն կարող ենք առանձնացնել –ունք հոգնակերտ-հավաքական մասնիկը (դրանց կազմությանն առանձին

Ածականի թվի քերականական կարգի արտահայտությունը հին հայերենում

կանդրադառնանք), իսկ *սպիտակօք* բառաձևի հոգնակին դրսևորվել է –ք մասնիկով՝ եզակի գործիականից՝ *սպիտակաւ-ք*:

Ինչպես կարելի է եզրակացնել վկայված օրինակներից, բազմական ածականները, որպես կանոն, հետադաս գործածությամբ հոլովով և թվով համաձայնում են հոգնակի լրացյալին, իսկ նախադաս բազմական ածականները՝ ոչ: Սակայն մատենագրության մեջ հանդիպում են բազմական նախադաս ածականների՝ հոգնակի թվով համաձայնության դեպքեր, որ պետք է համարել նախագրային օրինաչափության հետքեր: Հմմտ.

Դիմեալ գայ ի վերայ քո Բէլ *յաւեթիւք քաջօք երկնադիզօք հասակօք* սկայիւք մրցողօք (Խոր., 34):

Բերված օրինակներում *յաւեթիւք* և *երկնադիզօք* նախադաս ածականները հոգնակի թվով համաձայնել են հոգնակի լրացյալներին՝ *քաջօք* և *հասակօք*: Բազմական ածականների հոգնակին արտահայտվել է –ք մասնիկով, որ ավելացել է բառերի եզակի գործիականի վրա՝ *յաւեթիւ-ք* և *երկնադիզաւ-ք*:

Իբրև բազմակի հասարակ անունների լրացում՝ ածական անունն արտահայտվում է հոգնակի թվով, ինչպես՝ Սաւուղ և Յովնաթան *սիրելիք և գեղեցիկք և վայելուչք* (Բ. Թագ., Ա, 23): **Արդարոցն՝* Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ:

Նախադաս բազմակի ածականները թվով համաձայնում են հոգնակի լրացյալներին, երբ նրանցից միջարկված են լինում այլ լրացումներով³, հմմտ.

**Այսոքիւք և այլ բազմօք* խորհրդական *բանիւք*, **ի պղծոց* և ի նորաձայն *բանից*, **ի խստիցն* և յանվանելի *նիպոց*, **ի խածանողականացն* զազիր *զեռնոց*:

Ածականը հոգնակի թվով է արտահայտվում հավաքական անունների կամ այնպիսի գոյականների պահանջով, որոնք ձևով եզակի են, սակայն արտահայտում են հոգնակի նշանակություն՝ կա՛մ թվական լրացումով, կա՛մ իբրև տեսակի անուն (ազգի կամ տոհմի): Հմմտ.

**Ընթացաւ ամենայն ժողովուրդն զարմացեալք*: **Ժողովեցաւ ամենայն Իսրայէլ* իբրև զայր մի՝ *եկեալք* ի քաղաքաց: **Երկուրասան այր տգէտք և տառապեալք*, որք ի նմանէ էին հարեալք:

Բազմակի լրացումների դեպքում լրացումներից վերջինն է թվով և հոլովով համաձայնում լրացյալին, հմմտ.

² Աբրահամյան 1976, 61: Խաչատրյան, Թոսունյան 2004, 90–91: Առաքելյան 2008, 76:

³ Բագրատունի 1952, 330:

**Այս բանք ճշմարիտ և հաապարհմք: *Յանձն առ մտանել յանձն և ի մարմինս բորոքեալ և մեռելությունս: *Նկանակս կարմիր և փափուկս, յոյժ և գեղեցիկս⁴:*

Ածականի թվակազմությունը.

Ածականի թվակազմությունը պայմանավորված է նրա ձևակազմական գործոնով, որ մասնավորապես վերաբերում է ածանցավոր կազմություններին:

Հատկանշային խոսքի մասերի և վերացական հասկացությունների դեպքում թվանիշ վերջավորությունները բովանդակային պլանի հետ միասին կարող են ունենալ նաև ձևական կիրառություն և հանդես գալ որպես շարահյուսական կապակցության արտահայտիչներ⁵. դա պայմանավորված է հոգնակի լրացյալներին համաձայնելու շարահյուսական հատկանիշով:

Ածանցավոր ածականների հոգնակին, որպես կանոն, կազմվում է ելակետային՝ *սերող հիմք + ք մասնիկ կաղապարով*. վերջաձանցի տեսակը թվակազմության առումով չեզոք է:

Շարահյուսական մակարդակում հոգնակի թվով հանդես են գալիս ինչպես որակական, այնպես էլ հարաբերական ածականները: Մի դեպքում՝ ածականի հոգնակի թիվը պայմանավորված է հոգնակի լրացյալին համաձայնելու պահանջով, մյուս դեպքում՝ փոխանվանաբար (գոյականաբար) գործածվելու հանգամանքով:

Ածականի թվակազմությունը դիտարկենք երկու կտրվածքով՝ պայմանավորված ածականի որակական և հարաբերական տեսակներով. երկու դեպքում էլ, իբրև ելակետային միավորներ, նկատի ունենք ածանցավոր կազմությունները և թվակազմությունը ցույց ենք տալու ըստ ածանցների տեսակների:

Ա. Որակական ածականները հին հայերենում հատկանշվում են հետևյալ վերջաձանցներով՝ (*ա*)ւոր, -արար, -ական, -ալի // -ելի, -անի, -գոյն, -ին, -ուն, -եցիկ, -ուրի, (եր)իմ, -եղ, -իկ, -իչ // ուչ և այլն, նախաձանցավոր կազմությունները համեմատաբար սակավ են. այնուամենայնիվ հանդիպում են *ան-*,

⁴ Շարադրանքում *-ով տրված օրինակները վկայված են Ա. Բագրատունու աշխատությունից (Բագրատունի 1952):

⁵ Զահուկյան 1974, 182:

Ածականի թվի քերականական կարգի արտահայտությունը հին հայերենում

ապ(ա)-, ր- ածանցներով, որոնց մեջ գործառապես կենսունակ են *ան-* նախածանցով կազմությունները⁶:

Այս ածանցներով կազմությունների հոգնակին պայմանավորված է ոչ միայն հոգնակի լրացյալին համաձայնելու շարահյուսական հատկանիշով, այլև ածականների՝ փոխանվանաբար գործածվելու հանգամանքով: Կան որոշակի ածանցավոր կազմություններ էլ, որոնք իրենց իմաստային կառուցվածքում համատեղում են նաև գոյականի խոսքիմասային արժեք և, ըստ այդ հատկանիշի, կարող են հոգնակի թվի իմաստ արտահայտել. դրանք խոսքիմասային տարարժեք բառերն են, որոնք սերում է ածականական նախնական իմաստից ու արժեքից:

Դիտարկենք *ան-* նախածանցով որակական ածականների թվակազմությունն ու նրանց գործածությունը համապատասխան շարահյուսական միջավայրում: Քանի որ շարահյուսական միջավայրում գոյականն ու ածականը (որոշիչն ու որոշյալը) հանդես են գալիս հոլովի և թվի հարացուցային ձևերով, կարելի է ասել, որ այդ միավորները համատեղում են հոլովակազմությունն ու թվակազմությունը, հետևաբար այդ ձևերը ներկայանում են իբրև հոգնակիակազմ-հոլովակազմ հիմքերի և հոգնակերտ-հոլովակերտ վերջավորությունների զուգորդումներ⁷:

Ան- նախածանցով ածականները հոգնակին արտահայտում են –ք մասնիկի միջոցով, ինչպես՝

անամօթ-ք, անառակ-ք, անհաւատ-ք, անաստուած-ք, անարժան-ք, անզգամ-ք, անխիղճ-ք, անհնազանդ-ք, անհոգ-ք, անմեղ-ք, անմիաբան-ք, անմիտ-ք, անյոյս-ք, անշարժ-ք, անշշունջ-ք, անշունչ-ք, անուղղայ-ք, անպարտ-ք, անպիտան-ք, անջրդի-ք, անսուրբ-ք, անցաւ-ք, անցաւոր-ք, անօգնական-ք, անօգուտ-ք և այլն: Հմմտ.

Ի նշանակ որդոցն *անհնազանդից* (Թիւք, ԺԷ, 10): Յափշտակեցին զնա *անցաւորք* ճանապարհի (Սաղ., 2Ը, 42): Եւ *անմիաբանք* լեալ ի միմեանց, արձակէին (Գործ., ԻԸ, 25):

Ապ(ա)- ածանցով՝ ապաշնորհ-ք. Եղիշիք որդիք Բարձրելոյ, զի նա քաղցր է ի վերայ չարաց և *ապաշնորհաց* (Ղուկ., 2, 35):

Տ- ածանցով՝ տկար-ք, տհաս-ք. Աղեղունք հզորաց տկարացան, եւ *տկարք* զգեցան զօրութիւն (Ա. Թագ., Բ, 4):

⁶ Հին հայերենում ածականակերտ ածանցների բառակազմական արժեքի մասին տե՛ս **Туманян** 1971, 246–250:

⁷ **Պետրոսյան** 1972, 119:

Դիտարկենք վերջաձանցավոր որակական ածականների թվակազմությունն ու ցույց տանք դրանց գործածությունը համապատասխան բնագրային վկայություններով:

1. -Աւոր ածանցով կազմություններ. թունաւոր-ք, հեռաւոր-ք, կեղծաւոր-ք, ահաւոր-ք, աղետաւոր-ք և այլն:

Հմմտ. Եւ մարդ որ ... որ ի *հեռաւոր* ճանապարհի ոչ իցէ սատակեսցի անձն այն ի ժողովրդենէ իւրմէ (Թիւք., Թ, 13): Եւ *հեռաւորք* ի նոցանէ եկեսցեն և շինեսցեն զտուն Տեառն (Չաքա., 2, 15):

2. -Արար ածանցով կազմություններ. կենարար-ք, լուսարար-ք, աղմկարար-ք, զրուցարար-ք, խոռվարար-ք, հաշտարար-ք, ազդարար-ք, խոհարար-ք // խորտկարար-ք և այլն: Հմմտ.

Առաջնորդեսցէ մեզ ... Աստուած մեր Աստուած *կենարար* (Սաղ., ԿԷ, 21): Քրիստոս՝ որ յանձինս նոցա զարթոյց զկամս (իւր) *կենարարս* (ՆՀԲ, 1, 1084): *խոռվարար* խորհուրդք (ՆՀԲ, 2, 986): Լինին *խոռվարարք* և բարկացօղք (ՆՀԲ, 1, 986):

3. -Ական ածանցով կազմություններ. հոգեկան-ք, կործանական-ք, օրհասական-ք, հանրական-ք, հանդարտական-ք, խաղաղական-ք, բոլորական-ք և այլն:

Հմմտ. Տո՛ւր նմա պատասխանի *խաղաղական* (Սիրաք., Դ, 8): Եւ ահա ես իջից առ քեզ մատուցանել ողջակէզս և զոհս *խաղաղականս* (Ա Թագ., Ժ, 8): *Չօրհասական* վերսն յոգիսն ընկալեալ էր (Եղ., 64): Նա և արջք *օրհասականք* ընդ վախճանել շնչոցն հզորագոյնս կռուին (Եղ., 8):

4. -Ալի // -ելի ածանցներով կազմություններ. ցանկալի-ք, իմանալի-ք, բաղձալի-ք, տաղտկալի-ք, սիրելի-ք, գովելի-ք և այլն: Հմմտ.

Արքայն Նաբուգոդոնոսոր տարաւ զնա ի Բաբելոն ... հանդերձ *ցանկալի* սպասութ տանն Տեառն (Բ. Մնա., Լ2, 10): Եւ ամենայն գործք իւր *ցանկալիք* են (Սիրաք, ԽԲ, 23): Որդեա՛կ, *սիրելի արա՛* զանձն քո ժողովրդեան (Սիրաք., Դ, 7): Սաւուղ և Յովնաթան *սիրելիք* եւ գեղեցիկք եւ վայելուչք, չմեկնեալք ի կենդանութեան իւրեանց եւ ոչ մեկնեցան ի մահուան իւրեանց (Բ Թագ., Ա, 23):

5. -Անի ածանցով կազմություններ. գեղանի-ք, լեզուանի-ք, պիտանի-ք և այլն: Հմմտ. Եղիցի անօթ պատուական՝ սրբեալ և *պիտանի* Տեառն (Բ Տիմո. Բ, 21): Գտեալ ասր և կտաւ՝ արար անօթս *պիտանիս* ձեռօք իւրովք (Առակ, ԼԱ, 13):

Ածականի թվի քերականական կարգի արտահայտությունը հին հայերենում

6. -*Գոյն* ածանցով կազմվում է որակական ածականի բաղդատական աստիճանը, որի հոգնակին ձևավորվում է -ք ածանցով. լաւագոյն-ք, աւագագոյն-ք, բարձրագոյն-ք, գեղեցկագոյն-ք, պարզագոյն-ք, կարծրագոյն-ք, խստագոյն-ք և այլն: Հմմտ.

Եւ այնչափ *լաւագոյն* ուխտի եղեւ երաշխաւոր Քրիստոս (Եբրա., Է, 22): Մանաւանդ բազումք ի ձէնջ *լաւագոյնք* էք քան զիս արութեամբ (Եղ., 101): Եւ յարեաւ գնաց արքայ ի Գաբաւոն զոհել անդ, զի նա առաւել *բարձրագոյն* և մեծ էր (Գ Թագ., Գ, 4): ... Լերանց *բարձրագունից* (Խոր., 35):

7. - Ին ածանցով կազմություններ. դժուարին-ք, դիւրին-ք, վերին-ք, ներքին-ք խորին-ք, անհնարին-ք և այլն: Հմմտ.

Դիւրին է մալխոյ մտանել ընդ ծակ ասղան, քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ (Մատ., ԺԹ, 24): Եւ ասէ ցնա Աբիսողոմ. Ահա բանք քո բարի են և *դիւրինք* (Բ. Թագ., ԺԵ, 3): Զիա՛րդ *դժուարին* է որ զինչս ունին, մտանել յարքայութիւն Աստուծոյ (Մարկ., Ժ, 23): Եւ ասէ Յակոբ ցՓարաւոն. Աւուրք ամաց կենաց իմոց ... սակաւք և *դժուարինք* եղեն (Ծնն., ԺԷ, 9):

8. -Ուն ածանցով կազմություններ. խօսուն-ք, ասուն-ք, գիտուն-ք, իմաստուն-ք, հասուն-ք, զեռուն-ք և այլն: Հմմտ.

Առնել զբանաւոր *զիմաստուն* եւ զխօսուն արարածն ի մէջ անբան անխօս անիմաստ արարածոցն (Ագաթ., 135): Յորոց և *իմաստունքն* տեղի տուեալ փախչին ի նոցանէ (Եղ., 8): Եւ ամենայն *զեռուն* թռչուն, որ գնայցէ ի չորս՝ պիղծ եղիցի ձեզ (Ղեւտ., ԺԱ, 20): Այս ծով մեծ և անդորր, ի սմա *զեռունք*, որոց ոչ գոյ թիւ (Սաղ., ԾԳ, 23)⁸:

9. -Եցիկ ածանցով կազմություններ. երգեցիկ-ք, գեղեցիկ-ք, ազդեցիկ-ք և այլն: Հմմտ. Եւ էր կոյսն *գեղեցիկ* երեսօք յոյժ (Ծնն., ԻԴ, 16): Սաւուղ և Յովնաթան ... *գեղեցիկք* եւ վայելուչք, չմեկնեալք ի կենդանութեան իւրեանց եւ ոչ մեկնեցան ի մահուան իւրեանց (Բ Թագ., Ա, 23):

10. -Ուտի ածանցով կազմություններ. հնոտի-ք, սնոտի-ք, օտարոտի-ք և այլն: Հմմտ. Մի՛ *օտարոտի* համարել զեռանդն ինչ որ փորձութիւն ձեզ լինիցի (Ա Պետ., Դ, 12): Ի բաց արարէք ի ձէնջ զաստուածս *օտարոտիս* (Յեսու, ԻԴ, 23): Ի *սնոտի* յոյս կապեալ կան անհաւատք (Եզն., 105): Մի՛ որ զձեզ խաբեսցէ բանիւք *սնոտուովք* (Եփե., Ե, 8):

⁸ *Իմաստունք, զեռունք* բառերը խոսքիմասային տարարժեք բառեր են և հանդես են գալիս նաև գոյականի արժեքով:

11. -(Եր)իմ ածանցով կազմություններ. մտերիմ-ք, ոխերիմ-ք, հաւատարիմ-ք, ուշիմ-ք և այլն: Հմմտ.

Ոչ այնպէս, որպէս ծառայն իմ Մովսէս, որ յամենայնի տան իմում *հաւատարիմ* է (Թիւք, ԺԲ, 7): Դաշինս *հաւատարիմս* կռէր ընդ նմա (Բ.Մակ., Դ, 34): Մեռան ի մահուանն Արտաշիսի սիրելի կանայք ... և *մտերիմ* ծառայք (Խոր., 190): Ի ձեռն *մտերմաց* պատմէ եղբօրն զնենգութիւն (ՆՀԲ, 2, 307):

12. -Եղ ածանցով կազմություններ. ահեղ-ք, հանճարեղ-ք, շքեղ-ք, ուժեղ-ք, զօրեղ-ք, համեղ-ք և այլն: Հմմտ.

Ահա ժողովուրդ իմաստուն եւ *հանճարեղ*, ազգս այս մեծ (Բ Օրէն., Դ, 6): Արդ տուք ի ձէնջ արս ... *հանճարեղս* ի վերայ ցեղից ձերոց (Բ Օրէնք, Ա, 13): Մխիթարեցան անտի Յուդայ՝ ի *զօրեղ* եւ ի գեղեցիկ (Բ Մակ., ԺԵ, 17): Ախտից *զօրեղաց* (ՆՀԲ, 1, 757):

13. -Իկ ածանցով կազմություններ. անադիկ-ք, աշխարհիկ-ք (ա.գ) և այլն: Հմմտ.

Չար քան զյանցաւոր *աշխարհիկ* դատապարտիմք (ՆՀԲ, 1, 264): *Աշխարհիկքն* ետուն զբաժինս իւրեանց (ՆՀԲ, 1, 2164):

14. -Իչ, -ուչ ածանցներով կազմություններ. մատնիչ-ք, ամենափրկիչ-ք, թովիչ-ք (ա.գ), վայելուչ-ք և այլն: Հմմտ.

Ո՛վ արգահատեսցէ *թովչի* օձահարի (Սիրաք, ԺԲ, 13): Տեսանեմք ի հնարագիտութենէ *թովչաց* զգօնացեալ (օձից) ... և բնակեալ ի տան՝ չմեղանչեն բնակչացն (Եզն., 64): Քերեաց ճարտարութեամբ զամենայն կեղեւ հնարեալ *վայելուչ* անաւթ պիտանի (Իմաս., Ժգ, 11): Սաւուղ և Յովնաթան ... *վայելուչք*, չմեկնեալք ի կենդանութեան իւրեանց եւ ոչ մեկնեցան ի մահուան իւրեանց (Բ Թագ., Ա, 23):

15. -Ովի ածանցով կազմություն. կորովի-ք. Հմմտ.

Կորովի և յաջողակ ի պատերազմունս (ՆՀԲ, 1, 1121): Եւ ծանրացաւ պատերազմն ի վերայ Սաւուղայ, եւ գտին զնա արք *կորովիք* (Ա Թագ., ԼԱ, 3):

16. -Ի ածանցով կազմություններ. առաքինի-ք, յուրթի-ք, այլազգի-ք, բարի-ք և այլն: Հմմտ.

Ի մէջ բազմութեան երեւեցայց առա՛տ, եւ ի մէջ պատերազմի՝ *առաքինի* (Իմաս., Ը, 15): Գողացարուք աւադիկ զմիտս իմ խորհրդականքդ *առաքինիք* (Գ Մակ., Զ, 17): Եւ ամենայն ինչ՝ զոր Որմիզդն առնէր, *բարի* էր եւ ուղիղ (Եզն., 115): Զողորմութիւն և զճմարտութիւն նիւթեն *բարիք* (Առակ., ԺԴ, 22):

Բ. Հարաբերական ածականները բնութագրվում են հետևյալ ածանցներով՝ *-ային, -ական, -եայ, -եղէն, -ե // -ի, -եան, -անի* և այլն:

Ածականի թվի քերականական կարգի արտահայտությունը հին հայերենում

Հարաբերական ածականների թվի կարգը նույնպես պայմանավորված է շարահյուսական համաձայնության գործոնով, ինչպես նաև փոխանվանաբար գործածության հանգամանքով:

1. -Ային վերջածանցով կազմություններ. գարնանային-ք, աշնանային-ք, ամառնային-ք, ձմեռնային-ք, մարդկային-ք, լեռնային-ք, ցամաքային-ք, հարավային-ք, հիախային-ք, ծովային-ք, դաշտային-ք և այլն: Հմմտ.

Տիրեսցէ ամենայն *լեռնային* կողմանցն (Յուդիթ, Ժ, 13): Եւ առ Յեսու զամենայն երկիրն զայն, զլեռնակողմնն եւ զդաշտայինն եւ զարեւմտեայն (Յեսու, ԺԱ, 16): Իբրեւ լուան ամենայն թագաւորքն որ *լեռնայինք* և որ *դաշտայինք* ... եկին ի միասին տալ պատերազմ ընդ Յեսուայ (Յեսու, Թ, 1):

2. -Ական վերջածանցով կազմություններ. արքունական-ք, հայրական-ք, մայրական-ք, եղբայրական-ք, մանկական-ք, ծովական-ք, բարբարոսական-ք, տիեզերական-ք, վիմական-ք, արձանական-ք, դամբանական-ք, լեռնական-ք, մարմնական-ք և այլն: Հմմտ.

Եւ կշռէր զհեր գլխոյ իւրոյ երկերիւր սիկղ ըստ *արքունական* սկեղ (ԲԹագ. ԺԳ, 26): Եւ անդ շինեցին զապարանսն *արքունականս* (Բուգ., 16): Տացուք զայսոսիկ՝ *մանկականի* քոյոյ տիոց (Խոր., 90): Այսոքիկ են *մանկականքն* ... ոչ ցանկաս մեծութեան՝ որ յԱստուծոյ կայ մնայ միշտ (ՆՀԲ, 2, 2014):

3. -Եայ վերջածանցով կազմություններ. բրդեայ-ք, մետաքսեայ-ք, ասուեայ-ք, ծովափնեայ-ք, ստորերկրեայ-ք, միջօրեայ-ք և այլն: Հմմտ.

Մերաքսեայ զգեստ (ՆՀԲ, 2, 253): Զհետևակն՝ պահապանս քաղաքացն, որ *զմերաքսեայսն* ունէին զվիշապս (Խոր., 303): Ծանրագոյն գտանիցէք քան զաւագ *ծովափնեայ*՝ զվիշտս իմ (ՆՀԲ, 1, 1025): Արբցեն եգիպտացիքն զջրշեղջս *ծովափնեայս* (ՆՀԲ, 1, 1025):

4. -Եան վերջածանցով կազմություններ. աջակողմեան-ք, ձախակողմեան-ք, արեւելեան-ք, արեւմտեան-ք և այլն: Հմմտ.

Եւ իբրեւ ետես՝ եթէ վարատեալ ցրուեցան ի բազում կողմանս, ի խորհուրդ կոչէր զպաշտօնեայս *ձախակողմանն* (Եղ., 8): Կան *ձախակողմեանքն* ամօթով (ՆՀԲ, 2, 145):

5. -Եայ վերջածանցով կազմություններ. փախստեայ-ք, արեւելեալ-ք, արեւմտեայ-ք, մարմարեայ-ք և այլն: Հմմտ.

Բնակեցուցանէ *յարեւելեայ* ուսոյ մեծի լերինն (Խոր., 29): Եւ եղել քնակութիւն նոցա ի Մասեաց մինչեւ գալ ի Սովիերա լեառնն *յարեւելեայց* (Ծնն., Ժ,

30): Շինեաց ի վերայ խաչին *մարմարեայ* խորանս (ՆՀԲ, 2, 226): Սրունք նորա սին *մարմարեայք* հաստատեալք ի վերայ ոսկի խարսխաց (Երգ., Ե, 15):

6. -Եղէն ածանցով կազմութիւններ. արծաթեղէն-ք, ոսկեղէն-ք, երկաթեղէն-ք, ասրեղէն-ք, բրդեղէն-ք, բոցեղէն-ք, հողեղէն-ք, հրեղէն-ք, փայտեղէն-ք, խեցեղէն-ք և այլն: Հմմտ.

Եւ զամենայն կահ և սպաս տաճարին *ոսկեղէն* եւ *զարծաթեղէն* ... Ետ ի պահեստ ի տան կոոց իւրոց (Ա Եզր., 2, 18): Եւ անօթ *խեցեղէն*, յոր մերձեսցի սերմնակաթն, փշրեսցի, եւ ամենայն անօթ *փայտեղէն* լուսացի ջրով (Ղեւոն., ԺԵ, 12): Այլ ի տան մեծի ոչ միայն են անօթք *ոսկեղէնք* ու *արծաթեղէնք*, այլ եւ *փայտեղէնք* եւ *խեցեղէնք*... (Բ Տիմո., Բ, 20):

Երբ դիտարկում ենք ածականի թվակազմությունը՝ պայմանավորված ելակետային միավորի ձևակազմական գործոնով, ապա պետք է նկատի ունենալ նաև այն բառերը, որոնք բնորոշվում են վերջնականի յուրահատուկ հնչյունական կառուցվածքով:

Այսպես, հետևյալ՝ Ռ ձայնորդով և նախընթաց բաղաձայնով վերջացող բառերի վերջնականում հնչում է (ը)ր, ինչպես՝ *ծանր*, *կարծր*, *մանր*, *թանձր*, *փոքր*, *բարձր*, *քաղցր*, որոնց հոգնակին յուրահատուկ կազմություն ունի. հոգնակի ուղղականը կազմվում է եզակի սեռականից (որտեղ հանդես է գալիս Ու հոլովիչը), որին ավելանում է -ք հոգնակերտ մասնիկը, իսկ հոգնակերտից առաջ հանդես է գալիս Ն ձայնորդը, որ պահպանվում է հոգնակի թվի բոլոր հոլովներում⁹:

Հմմտ. *ծանր* – *ծան-ու-ն-ք*, *կարծր* – *կարծ-ու-ն-ք*, *մանր* – *ման-ու-ն-ք*, *թանձր* – *թանձ-ու-ն-ք*, *փոքր* – *փոք-ու-ն-ք*, *բարձր* – *բարձ-ու-ն-ք*, *քաղցր* – *քաղց-ու-ն-ք*:

Այս բառաձևերը գործածվում են միայն հոգնակի գոյականների հետ և թվով ու հոլովով համաձայնում են նրանց: Հոգնակի թվի թեք հոլովներում թվակազմական իմաստն արտահայտվում է ք-ց հերթագայությամբ, իսկ հոգնակի հայցականում՝ ք-ս (ինչպես հոգնակի գոյականների դեպքում): Հմմտ. *լերին-ք* բարձուն-ք – *լերան-ց* բարձան-ց, (զ)լերին-ս բարձուն-ս, ի *լերան-ց* բարձան-ց, *լերամբ-ք* բարձամբ-ք, *ձկուն-ք* մանուն-ք – *ձկան-ց* մանուն-ց, (զ)ձկուն-ս մանուն-ս, *ձկան-ց* մանուն-ց, *ձկամբ-ք* մանումբ-ք և այլն: Հմմտ.

Կալարութ մեզ *աղուեսունս փոքունս* զապականիչս այգեաց (Երգ., Բ, 15): Ծածկէր զամենայն *լերինս բարձունս* (Ծնն. Է, 19): Հասանէ յեզր ծովակի միոյ,

⁹ Աբրահամյան 1976, 43:

Ածականի թվի քերականական կարգի արտահայտությունը հին հայերենում

որոյ աղի են ջուրքն, *մանունս* ունելով յինքեան *ծկունս* (Խոր., 35): Կապեն *քեռինս ծանունս* եւ դժուարակիրս (Մատ., ԻԴ, 4):

Հոգնակի ենթակայի պահանջով ածականը հոգնակի թվով գործառնվում է բաղադրյալ ստորոգյալի կազմում, ինչպես՝ Ասիցէք. *թուղթքս ծանունք են* եւ *սասարիկք* (Բ. Կորն., Ժ, 10):

Հոգնակի ածականը առանձին կարող է հանդես գալ մակբայի արժեքով (հոգնակի հայցականով), ինչպես՝ Ականջք իւրեանց *ծանունս* լուան (Մատ., ԺԳ, 13)՝ (ծանրությամբ): Դառանբեր վիժանք հոգւոյն *քաղցունս* բղխեսցեն (ՆՀԲ, 2, 973)՝ (քաղցրությամբ):

Հոգնակի գործիականում ածականն ստանում է հոգնակերտ –ք մասնիկը, որ ավելանում է եզակի գործիականի վրա, հմմտ. լերամբ-ք բարձամբ-ք, քարամբ-ք կարծամբ-ք և այլն:

Հին հայերենում *բարձունք* բառն անկախացել է գոյականի իմաստով ու արժեքով՝ «բարձր տեղ, բարձունք» նշանակությամբ, որ ծագում է *բարձր* ածականի հոգնակի ձևից, ինչպես՝ Ձագք արծուեաց *ի բարձունս* թռչին (Յոբ, Է, 7): Հաստատեցեր զոտս իմ ... և *ի վերայ բարձանց* կացուցեր զիս (Սաղ., ԺԷ, 34):

Եզրակացություններ

Հին հայերենում ածականի թվակազմությունը դիտարկելի է նրա գործառական ոլորտում՝ շարահյուսական մակարդակում, քանի որ ածականի թվի հատկանիշը ոչ թե ձևաբանական, այլ շարահյուսական իմաստավորում է. շարահյուսական ձևով կատարվող սահմանափակումներից դուրս ածական անունն ընդհանրապես, հոգնակի թիվը՝ մասնավորապես, գործածություն չունեն: Ածական անունը, նրա թվի կարգը իմաստավորվում և արժևորվում են խոսքային գործածության ոլորտում. ըստ այդմ՝ նրա ձևաբանական հատկանիշներն իրացվում և դիտարկվում են շարահյուսական մակարդակում՝ ելնելով նրա լրացական դերից, հոգնակի լրացյալներին համաձայնելու շարահյուսական հատկանիշից և փոխանվանաբար գործածվելու հանգամանքից:

Լեզվում հարաբերական և որակական ածականների թվակազմությունը պայմանավորված է նաև ձևակազմական գործոնով, որ մասնավորապես վերաբերում է ածանցավոր կազմություններին: Հին հայերենում ածանցավոր ածականների հոգնակին, որպես կանոն, կազմվում է ելակետային՝ *սերող հիմք + ք մասնիկ կաղապարով*. վերջածանցի տեսակը թվակազմության առումով չեզոք է:

Դիտարկված փաստական նյութի, ածականների տեսակների և նրանց ձևակազմական տիպերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ածական անվան հոգնակի թվի քերականական իմաստն արտահայտվում է *մասնիկավորման միջոցով*:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Ա.Ա. 1976, Գրաբարի ձեռնարկ, Երևան, «Լույս», 558 էջ:

Առաքելյան Վ.Դ. 2008, Գրաբարի քերականություն, Երևան, «Վիամիր», 343 էջ:

Բագրատունի Ա. 1852, Հայերեն քերականություն ի պետս զարգացելոց, Ի Վենետիկ, Ի վանս Սրբոյն Ղազարու, 743 էջ:

Խաչատրյան Լ.Մ., Թոսունյան Գ.Բ. 2004, Գրաբարի դասագիրք, Երևան, «Զանգակ-97», 383 էջ:

Պետրոսյան Հ.Զ. 1972, Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 453 էջ:

Ջահուկյան Գ.Բ. 1974, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 588 էջ:

Ջահուկյան Գ. 1989, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 319 էջ:

Туманян Э. 1971, Древнеармянский язык, Москва, изд. «Наука», 448 с.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա) Բնագրային օրինակների սկզբնաղբյուրներ

Ագաթ.- Ագաթանգեղայ Պատմություն Հայոց, Տփլիս, 1909:

Բուզ.- Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:

Եզն.- Եզնկայ Կողբացոյ՝ Բագրեանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

Եղ.- Եղիշէի վարդապետի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957:

Խոր.- Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1913:

ՆՀԲ.- Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երկասիրութիւն երից վարդապետաց, Գ.Աւետիքեան, Խ. Սիրմէեան, Մ. Ազեբեան, հհ. Ա-Բ, ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1836–1837:

բ) Աստվածաշունչ մատյանի համառոտագրություններ

Առակ.- Առակք Սողոմոնի

Գործ.- Գործք առաքելոց

Ա Եզր.- Եզր. գիրք առաջին

Եբրա.- Թուղթ Պողոսի առաքելոյ առ Եբրայեցիս

Ածականի թվի քերականական կարգի արտահայտությունը հին հայերենում

Եփե.- Թուղթ Պողոսի առաքելոյ առ Եփեսացիս
Զաքա.- Մարգարէութիւն Զաքարեայ
Թագ., Ա. Բ. Գ.- Գիրք թագաւորութեանց Ա. Բ. Գ.
Թիւք.- Գիրք Թուոց
Իմաս.- Իմաստութիւն Սողոմոնի
Ծնն.- Ծնունդք
Կորն.- Թուղթ Պողոսի առաքելոյ առ Կորնթացիս Բ.
Ղեւտ.- Ղեւտականք
Ղուկ.- Աւետարան ըստ Ղուկասու
Մատ.- Աւետարան ըստ Մատթէոսի
Մարկ.- Աւետարան ըստ Մարկոսի
Մնա.- Գիրք Մնացորդաց Բ.
Յեսու.- Գիրք Յեսուայ՝ որդւոյ Նաւեայ
Յոր.- Գիրք Յորայ
Յուդիթ.- Յուդիթ
Ա Պետ.- Թուղթ Պետրոսի առաքելոյ Ա.
Սաղ.- Գիրք Սաղմոսաց Դաւթի
Սիրաք.- Գիրք Սիրաքայ
Տիմո.- Թուղթ Պողոսի առաքելոյ առ Տիմոթէոս Բ.
Բ Օրէն.- Երկրորդումն Օրինաց

ВЫРАЖЕНИЕ ГРАММАТИЧЕСКОЙ КАТЕГОРИИ ЧИСЛА ПРИЛАГАТЕЛЬНОГО В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ХАЧАТРЯН Л., ХАЧАТРЯН Л.

Резюме

Ключевые слова: прилагательное, категория числа, аффиксация, синтаксический уровень, морфологическое значение, производная основа, числообразовательные частицы.

Числообразование прилагательного рассматривается на синтаксическом уровне, поскольку признак числа прилагательного имеет не морфологическое, а синтаксическое значение; имя прилагательное вообще, и мно-

жественное число в частности, вне синтаксических ограничений не употребляется.

Имя прилагательное, категория его числа осмысливаются и имеют значение на речевом уровне. В соответствии с этим морфологические признаки прилагательного рассматриваются на синтаксическом уровне.

Числообразование относительных и качественных прилагательных, в частности суффиксальных структур, обусловлено их формообразовательным фактором. Множественное число аффиксальных прилагательных, как правило, образуется по модели *производная основа+частица р*. Тип суффикса с точки зрения числообразования нейтрален.

Анализ рассматриваемого фактического материала, видов прилагательных и их формообразовательных типов показывает, что грамматическое значение множественного числа прилагательного выражается посредством аффиксации.

EXPRESSION OF THE GRAMMATICAL CATEGORY OF ADJECTIVE'S NUMBER IN OLD ARMENIAN

KHACHATRYAN L., KHACHATRYAN L.

Summary

Key words: adjective, grammatical category of number, affixation, syntax level, morphological level, derivative stem, number-formation patterns.

The number-formation of adjective was viewed on the syntactic level of adjective, as its number indication has not a morphological but a syntactic meaning. Adjective in general and its plural form in particular, does not have any other usage except its syntactically limited usages.

Adjective and its grammatical category of number have meaning and value in verbal usage. Hence, morphological indications of adjective are viewed and realized on the syntactic level.

The number-formation of relative and qualitative adjectives depends on the factor of their form construction, which particularly refers to derivative compositions. The plural of derivative adjectives, as a rule, is formed according to

Ածականի թվի քերականական կարգի արտահայտությունը հին հայերենում

the initial pattern; derivative stem+ particle *p*; the type of suffix is neutral from the point of view of number-formation.

The survey of facts, analysis of types of adjectives and their construction forms show that the grammatical meaning of plural adjective is expressed by affixation.